

ՀՏԴ 06 : 159.9 : 378
ԳՄԴ 88 + 74.58
Գ 600

*Երաշխավորվել է տպագրության Երևանի պետական
համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից*

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Նախագահ՝

հոգ. գիտ. թեկ. **Հ. Ռ. Հովհաննիսյան**, ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոն

Տեղակալներ՝

հոգ. գիտ. թեկ. **Դ. Ռ. Հայրապետյան**, ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոն

մանկ. գիտ. թեկ. **Ս. Վ. Հովհաննիսյան**, ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

հոգ. գիտ. թեկ. **Հ. Ռ. Հովհաննիսյան**, ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոն

հոգ. գիտ. թեկ. **Դ. Ռ. Հայրապետյան**, ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոն

մանկ. գիտ. թեկ. **Ս. Վ. Հովհաննիսյան**, ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոն

հոգ. գիտ. թեկ. **Ն. Գ. Խաչատրյան**, ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոն

Ա. Հ. Գալստյան, ԵՊՀ փորձարարական հոգեբանության ԳՀ լաբորատորիա

Ս. Հ. Մանուսյան, ԵՊՀ փորձարարական հոգեբանության ԳՀ լաբորատորիա

Դ. Յու. Մարգարյան, ԵՊՀ անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության ԳՀ լաբորատորիա

Հ. Հ. Առաքելյան, ԵՊՀ փորձարարական հոգեբանության ԳՀ լաբորատորիա

Գ 600 «Հոգեբանական հետազոտությունների արդիականացման հիմնախնդիրները» երիտասարդ հոգեբանների գիտաժողովի նյութեր. ԵՊՀ հրատ., 2008, 140 էջ:

Սույն ժողովածուն ներառում է «Հոգեբանական հետազոտությունների արդիականացման հիմնախնդիրները» երիտասարդ հոգեբանների գիտաժողովի զեկույցների նյութերը, որը տեղի է ունեցել Երևանի պետական համալսարանում 2008թ. հոկտեմբերի 24-ին: Գիտաժողովում ներառված են եղել նրկու բաժիններ՝ «Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանական ապահովում» և «Հոգեղիագնոստիկ մեթոդներին և հետազոտություններին կազմակերպմանը ներկայացվող պահանջներ»:

ԳՄԴ 88 + 74.58

ISBN 978-5-8084-1047-3

© ԵՊՀ հրատարակչություն, 2008թ.
© Հեղ. կոլեկտիվ, 2008 թ.

<i>Պողոսյան Ս. Գ.</i> Օժտվածության բացահայտման հիմնախնդրի որոշ հարցեր	50
<i>Սարգսյան Դ. Յու.</i>	
Մասնագիտական ինքնաիրացման գործընթացի հոգեբանական հետազոտությունների արդիականությունը	54
<i>Վարդանյան Ա. Ռ.</i>	
Ընտանեկան կյանքի վերաբերյալ երիտասարդների ակնկալիքների ու պատկերացումների ուսումնասիրման մեթոդները	57
<i>Բաղդասարյան Լ. Վ.</i>	
Экзистенциально-феноменологический подход к проблемам социальной реадaptации личности	61
<i>Բեսկորովայնայա Վ. Վ.</i>	
Роль функциональной пробы в психодиагностике индивидуально-психологических особенностей детей	65
<i>Խաչատրյան Ա. Ս.</i>	
Подготовка по программам оптимизации работы экипажа в кабине (CRM-Crew Resource Management)	69
<i>Դավթյան Ա. Տ.</i>	
Վերլուծական և կոգնիտիվ հոգեթերապիաների ընդհանուր գործոնները	73
<i>Լաչինյան Լ. Լ.</i>	
Քաղաքացիական ինքնագիտակցության ինքնագնահատականը դեռահասների մոտ	77
<i>Հակոբյան Ա. Վ.</i>	
Կարիերայի հոգեբանության ուրվագծերը գիտական հոգեբանության ծագման ակունքներում	82
<i>Հայրապետյան Դ. Ռ.</i>	
Համակարգչային հոգեչափմանը ներկայացվող հիմնական պահանջները	87

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՈԳԵՉԱՓՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ

Առանցքային բառեր` համակարգչային հոգեչափում, փորձարարական վահանակ, էրգոնոմիկական պահանջներ, էկրանի և ձայնի կարգավորումներ:

Հոգեչափման զարգացման ժամանակակից փուլում աշխատանքների մեծամասնությունը նվիրված է մեթոդիկաների ավտոմատացմանը` առավելապես հայտնի հոգեճանաչողական թեստերի համակարգչային տարբերակների մշակմանը: Ստանդարտացված վերբալ և ստատիկ ոչ վերբալ ազդակներ ընդգրկող թեստերի համակարգչայնացումը էական դժվարություններ չի ներկայացնում: Այս պարագայում համակարգիչը կատարում է պարզ հաշվիչի դեր` այն տարբերությամբ, որ ապահովում է ազդակների ավտոմատ ներկայացում, պատասխանների գրանցում, հետազոտության արձանագրության կազմում և տալիս է հոգեբանի համար ավանդական պատասխաններ: Պատկերը փոքր ինչ այլ է գործիքային թեստերի պարագայում, ուր համակարգիչը փոխարինում է բազմաթիվ հոգեչափողական սարքավորումների և առավել արդյունավետորեն իր վրա վերցնում դրանց գործառույթները:

Ավտոմատացման շնորհիվ հոգեչափողական պրակտիկայում կարելի է դիտարկել մի շարք քանակական դրական էֆեկտներ.

- արդյունքների արագ ստացում,
- հետազոտվողը ազատվում է բազմաթիվ ընթացակարգային աշխատատար օպերացիաներից,
- բարձրանում է արդյունքների գրանցման ճշգրտությունը և բացառվում են սկզբնական պատասխանների մշակման սխալները,
- զգայաշարժողական գործիքային թեստերի պարագայում մինչև միլիվայրկյանի ճշգրտությամբ գրանցվում են փորձարկվողի պատասխանները,

- թույլ է տալիս զուգահեռ թեստավորման պարագայում կարճ ժամկետներում իրականացնել մասսայական թեստավորում [1,2]:

Համակարգչային հոգեչափումը ընձեռելով վերոհիշյալ բազմաթիվ առավելությունները՝ առաջ է քաշում նաև հոգեչափողական գործընթացի և միջավայրի կազմակերպման հստակ և կոշտ պահանջներ, որոնց պահպանման պարագայում միայն կարելի է ստանալ մեծ ճշգրտությամբ հավաստի արդյունքներ:

Նախ և առաջ, անհրաժեշտ է նշել, որ ապարատուրային թեստերի պարագայում կտրականապես արգելվում է օգտագործել համակարգչային հոգեչափման առաջին երեք չափումների արդյունքները: Տվյալների գրանցումը պետք է սկսել չորրորդ չափումից, քանի որ անհրաժեշտություն կա, որպեսզի հետազոտվողը հարմարվի մեքենայական օդակի հետ աշխատանքին: Եվ շատ դեպքերում համակարգչային հոգեչափողական մեթոդների համար մշակվում են նախնական հետազոտման հավելյալ բաժիններ:

Մեր կողմից կատարված համակարգչային հոգեչափողական բազմաթիվ հետազոտությունները և գրականությունում առկա փորձարարական տվյալները թույլ են տալիս առանձնացնել ներկայացվող պահանջների երեք հիմնական ոլորտներ.

- փորձարարական վահանակի կարգավորում,
- էկրանի կարգավորում,
- ձայնի կարգավորում:

Փորձարարական վահանակի կարգավորում:

Փորձարարական վահանակի ընդհանուր կողմնորոշումը պետք է նպաստի հավասարաչափ լուսավորմանը և էկրանին փայլերի առաջացման խուսափմանը:

Խորհուրդ է տրվում հետազոտվողին տրամադրել էրզոնոմիկական աթոռ՝ բարձրության և թիկնակի կարգավորման հնարավորությունով: Բարձրությունը պետք է կարգավորվի այնպես, որ ոտքերը ծալվեն ուղիղ անկյան տակ, այն պարագայում, երբ թաթերը ամբողջությամբ զետնի վրա են: Փորձարարական սեղանի մակերեսը պետք է մոտավորապես համապատասխանի հետազոտվողի փոքի մակարդակին:

Իդեալական տարբերակում մոնիտորը պետք է աչքերից հեռացված լինի հետազոտվողի պարզված ձեռքի տարածությամբ: Սակայն, ցանկացած պարագայում էլեկտրոն-ճառագայթային մոնիտորները, ի տարբերություն հեղուկ-քյուրեղայինների խորհուրդ չի տրվում տեղադրել 50 սմ-ից մոտ:

Այս կանոնների պահպանման պարագայում մոնիտորի վերին մասը կհայտնվի հետազոտվողի աչքերի մակարդակում կամ էլ ավելի ցած, որը խանգարում է աչքի կոնյուկտիվի արհեստական չորացմանը:

Ստեղնաշարը տեղակայվում է սեղանի ծայրից նվազագույնը 10 սմ հեռավորության վրա: Սեղանի լայնությունը պետք է հնարավորություն ընձեռի մկնիկը տեղակայել ստեղնաշարի կողքին և ոչ թե դիմաց:

Էկրանի կարգավորում:

Բազմաթիվ փորձարարական տվյալները թույլ են տալիս առանձնացնել յուրաքանչյուր մոնիտորի համար իրեն հատուկ կարգավորումները: Օրինակ խորհուրդ է տրվում.

- 14-15 դյույմ մոնիտորների համար օգտագործել 800X600 կետ խտայնություն (screen resolution),
- 17-19 դյույմ՝ 1024X768,
- 21 և ավել՝ 1280X960:

Սահմանել նկարի ռեզոներացիայի նվազագույնը 75 հերց հաճախություն՝ էլեկտրոն-ճառագայթային և 60 հերց հեղուկ-բյուրեղային մոնիտորների համար:

Ձայնի կարգավորում:

Որոշ հոգեչափողական մեթոդներ պահանջում են ձայնային ազդակների վերարտադրում: Դրա համար անհրաժեշտ է օգտագործել բարձրախոսներ և կամ ականջակալներ (խմբային թեստավորման համար), որոնց կարգավորումը պետք է կատարել մինչև հետազոտության սկսելը: Ձայնի բարձրությունը պետք է ապահովի հիմնական ձայների տարբերակման բավարար մակարդակ, իսկ ստենդի գործիքային ֆոնային աղմուկները պետք է հասցվեն նվազագույնի:

Էրգոնոմիկական պահանջներ:

Որոշ թեստերի իրականացումը կարող է պահանջել նշանակալի ժամանակ, որի ընթացքում կարող են էական դառնալ հոգնածության և համակարգչի հետ տևական շփման գործոնները: Դրա համար նախօրոք պետք է հաշվարկել համակարգչի հետ աշխատանքի էրգոնոմիկական ցուցանիշները: Այս նպատակով որոշ համակարգչային հոգեչափողական համակարգեր ներառում են միջանկյալ թուլացնող և հանգստացնող հոգեբանական վարժությունների համակարգեր [3]:

Համակարգչային հոգեչափման ոլորտում կատարվող հետազոտություններն օրեցօր ավելանում են և յուրաքանչյուր նոր ստեղծված ծրագիր և համակարգչայնացված մեթոդիկա՝ անհրաժեշտորեն առաջ է քաշում իր յուրահատուկ պահանջները, որոնք էլ կամ ընդգրկվում են համակարգչային հոգեչափման ընդհանուր պահանջների շարքում,

Կամ էլ մնում մասնավոր մեթոդիկայի մակարդակում:

Գրականության ցանկ

1. **Доронина О. В.** Страх перед компьютером: природа, профилактика и преодоление. //Вопросы психологии, №1, 1993.
2. **Иовлев А. Б., Иовлев Б. В., Червинская К. Р.** Об автоматизации психодиагностических исследований. Тр./НИИ им. В. М. Бехтерева. - Л., 1985.
3. **www.effecton.ru** – Руководство пользователя - **Иван Тугой**, 2006.

РЕЗЮМЕ ОСНОВНЫЕ ТРЕБОВАНИЯ ПРЕДЪЯВЛЯЕМЫЕ К КОМПЮТЕРНОЙ ПСИХОМЕТРИКЕ

В настоящее время преобладающее большинство разработок относится к автоматизации методик, что выражается, главным образом, в создании компьютерных версии известных психодиагностических тестов, ранее предназначенных для "ручного" употребления. В связи с этим в сфере компьютерной психометрики формируются новые и специфические требования к проведению диагностического исследования, обсуждению которых и посвящен тезис.